**ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/52 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի Հավելված 1**
**ՇԱՐԺԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՏԵՍԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

**Արտաքին տեղադրման IP տեսախցիկ՝ SIM քարտով աշխատանքի հնարավորությամբ՝ 1 հատ:**

1. Տեսախցիկը պետք է ունենա SIM քարտի միջոցով առնվազն LTE կամ ավելի նոր սերնդի բջջային կապի ցանցով աշխատելու և տվյալներ փոխանցելու հնարավորություն:
2. CMOS սենսոր՝ ոչ պակաս, քան 1/2.8", լուծաչափ՝ ոչ պակաս, քան 3MP, տեսագրման հաճախականություն՝ ոչ պակաս, քան 25 կադր/վրկ:
3. H.265/H.265+ տեսասեղմման տեխնոլոգիաների աջակցություն:
4. Օբյեկտիվ՝ ոչ վատ, քան F1.6 լուսազգայունությամբ, հորիզոնական դիտման անկյուն՝ ոչ պակաս, քան 73°:
5. PT կառավարում՝ հորիզոնական պտույտ ոչ պակաս, քան 345°, ուղղահայաց թեքում ոչ պակաս, քան 90°, թիրախի ավտոմատ հետևման հնարավորությամբ:
6. Գիշերային տեսանելիություն՝ ոչ պակաս, քան 30 մ, IR և սպիտակ/հիբրիդային լուսավորմամբ, գունավոր և սև-սպիտակ ռեժիմներով:
7. AI վերլուծություն՝ մարդու, տրանսպորտային միջոցի, շարժման, ներխուժման և վիրտուալ գծի հատման հայտնաբերման, ինչպես նաև կեղծ ահազանգերի նվազեցման հնարավորությամբ:
8. Ներկառուցված խոսափող, բարձրախոս, երկկողմանի ձայնային կապ, ձայնային և լուսային կանխարգելիչ ահազանգ:
9. microSD քարտի բնիկ՝ ոչ պակաս, քան 256 ԳԲ աջակցությամբ:
10. Առնվազն երկու տեսահոսք՝ Main Stream և Sub Stream, RTSP և ONVIF:
11. Վեբ (Web) կառավարման միջերես, օգտատերերի իրավունքների կառավարում, NTP ժամանակի համաժամեցում, ծրագրային ապահովման (Firmware) տեղային կամ հեռավար թարմացման հնարավորություն:
12. Սնուցում՝ 12V DC, առավելագույն սպառում՝ ոչ ավելի, քան 10 Վտ:
13. Աշխատանքային ջերմաստիճան՝ ոչ վատ, քան -30°C-ից +55°C, խոնավություն՝ մինչև 95%:
14. Տեսախցիկը պետք է ունենա ոչ ցածր, քան IP66 պաշտպանության աստիճան, ինչպես նաև գերլարման, կայծակային ազդեցության և լարման կարճատև տատանումների  պաշտպանության միջոցներ:
15. Սարքը պետք է լինի նոր, գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված և մատակարարվի գործարանային ամբողջական լրակազմով, ներառյալ՝ սնուցման բլոկը (Power Adapter) և տեղադրման համար անհրաժեշտ բոլոր պարագաները:
16. Առաջարկվող ապրանքի արտադրողը պետք է ունենա պաշտոնական գործող կայք, որտեղ հրապարակված լինեն առաջարկվող ապրանքի մոդելի տեխնիկական բնութագրերը: Մատակարարը պարտավոր է մատակարարման պահին տրամադրել արտադրողի պաշտոնական կայքի համապատասխան հղումը, որի միջոցով հնարավոր կլինի նույնականացնել առաջարկվող ապրանքի մոդելը,

ծանոթանալ դրա պաշտոնական տեխնիկական բնութագրերին և ստուգել սույն տեխնիկական բնութագրի պահանջներին դրա համապատասխանությունը:

Մատակարարվող ապրանքի երաշխիքային ժամկետը պետք է լինի առնվազն 1 տարի՝ մատակարարման օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում մատակարարը պարտավոր է իր միջոցներով ապահովել ապրանքի անսարքությունների վերացումը կամ փոխարինումը:

**Հատակային մետաղական բազմաֆունկցիոնալ հենարան 1 հատ:**

1. Հենարանը պետք է նախատեսված լինի տեսախցիկների, լուսանկարահանման, տեսանկարահանման, պրոյեկտորների և այլ համատեղելի սարքավորումների կայուն հատակային տեղադրման համար և լինի ինքնուրույն կանգնող մետաղական կառուցվածքով:
2. Հիմքը պետք է լինի ծանրացված, ամբողջությամբ մետաղական, հարթ, ուղղանկյուն կամ քառակուսի ձևի՝ յուրաքանչյուր կողմի չափը ոչ պակաս, քան 290 մմ և ոչ ավելի, քան 350 մմ, և ապահովի հենարանի բարձր կայունությունը շահագործման ընթացքում:
3. Ուղղաձիգ կրող սյունը պետք է տեղադրված լինի հիմքի հետևի եզրային հատվածում՝ ապահովելով հենարանի հնարավորինս մոտ տեղադրումը պատին:
4. Հենարանի կառուցվածքում չպետք է լինեն դեպի հետևի կողմը դուրս ցցված ոտքեր, խաչաձև, աստղաձև կամ այլ կայունացնող տարրեր, որոնք կխոչընդոտեն պատին մոտ տեղադրմանը:
5. Հենարանը պետք է ունենա բարձրության կարգավորման հնարավորություն՝ ոչ պակաս, քան 65 սմ-ից մինչև 125 սմ, ինչպես նաև կարգավորումից հետո դիրքի հուսալի ֆիքսման մեխանիզմ:
6. Հենարանի վերին հատվածում պետք է լինի դեպի առաջ դուրս եկող հորիզոնական մետաղական թև՝ ոչ պակաս, քան 190x27x4 մմ, սարքավորման ամրացման համար:
7. Ամրացման հանգույցը պետք է ապահովի 360° պտտման և թեքման կարգավորման հնարավորություն:
8. Ամրացման պտուտակը պետք է լինի 1/4" (UNC) ստանդարտ չափի:
9. Թույլատրելի բեռնատարողությունը պետք է լինի ոչ պակաս, քան 10 կգ:
10. Կառուցվածքը պետք է լինի ամբողջությամբ մետաղական, ունենա հակակոռոզիոն պաշտպանիչ ծածկույթ:
11. Հենարանը պետք է լինի սև գույնի:
12. Պետք է լինի նոր, գործարանային արտադրության, նախկինում չօգտագործված և մատակարարվի գործարանային ամբողջական լրակազմով՝ տեղադրման համար անհրաժեշտ բոլոր պարագաներով:

**Կուտակիչային անխափան սնուցման սարք (DC UPS) 2 հատ:**

1. Տեսակը՝ ցածրավոլտ անխափան սնուցման սարք՝ երթուղիչների, կոմուտատորների, տեսախցիկների և այլ 5 Վ, 9 Վ կամ 12 Վ լարմամբ աշխատող սարքավորումների համար:
2. Մարտկոցը՝ լիթիում-իոնային, առնվազն 4 × 5000 մԱժ, ընդհանուր էներգատարողությունը՝ առնվազն 72 Վտ·ժ:
3. Մուտքը՝ 12 Վ DC / առնվազն 2.0 Ա:
4. Ելքերը՝ առնվազն՝ 12 Վ DC / 1.5 Ա, 9 Վ DC / 2.0 Ա, 5 Վ DC / 2.1 Ա, USB-A՝ 5 Վ / 2.1 Ա և USB-C՝ 5 Վ / 2.1 Ա:
5. Ընդհանուր առավելագույն ելքային հզորությունը՝ առնվազն 18 Վտ:
6. Արտաքին սնուցման անջատման դեպքում անցումը մարտկոցային ռեժիմի պետք է լինի ավտոմատ՝ 0 մվ փոխանցման ժամանակով:
7. Սարքը պետք է ունենա գերլիցքավորումից, գերլիցքաթափումից, գերբեռնվածությունից և կարճ միացումից պաշտպանություն:
8. Սարքը պետք է ունենա միացման/անջատման կոճակ, արտաքին սնուցման ռեժիմի և մարտկոցի առնվազն 100%, 60% և 30% լիցքավորման մակարդակների լուսային ցուցիչներ:
9. Կորպուսը պետք է պատրաստված լինի V-0 դասի հրակայուն պլաստիկից, ունենա օդափոխման անցքեր և պատին ամրացման հնարավորություն:
10. Լրակազմում պետք է ներառվեն 12 Վ DC սնուցման ադապտեր առնվազն 2.0 Ա:
11. Առաջարկվող սարքը պետք է լինի արտադրողի կամ ապրանքային նշանի պաշտոնական արտադրատեսակ, ունենա հրապարակված տեխնիկական նկարագիր, մոդելի հստակ անվանում և պաշտոնական առցանց հղում, որով հնարավոր կլինի նույնականացնել սարքի տեխնիկական բնութագրերը:

Մատակարարվող ապրանքի երաշխիքային ժամկետը պետք է լինի առնվազն 1 տարի՝ մատակարարման օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում մատակարարը պարտավոր է իր միջոցներով ապահովել ապրանքի անսարքությունների վերացումը կամ փոխարինումը:

**Պարտադիր պայմաններ**
**Մատակարարը պետք է տեսախցիկը հուսալիորեն ամրացնի հենարանի հորիզոնական թևի ստորին հատվածում՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով համապատասխան մետաղական ադապտեր: Հորիզոնական թևի վերևում պետք է ամրացվի 140 × 140 մմ չափերով և առնվազն 1 մմ հաստությամբ սև գույնի մետաղական հենահարթակ: Հենահարթակի եզրերը պետք է լինեն հարթ և պատշաճ մշակված՝ առանց սուր եզրերի ու անհարթությունների: Հենահարթակը պետք է պտուտակային եղանակով հուսալիորեն ամրացվի, իսկ սնուցման սարքը պետք է ուղղակի տեղադրվի հենահարթակի վրա՝ հեշտ հանման և փոխարինման հնարավորությամբ:**
**Համալիրը պետք է ունենա ամբողջական, կոկիկ և գործարանային արտադրանքին մոտ արտաքին տեսք:**

**Приложение 1**

## ТЕХНИЧЕСКИЕ ХАРАКТЕРИСТИКИ МОБИЛЬНОГО АВТОНОМНОГО КОМПЛЕКСА ВИДЕОНАБЛЮДЕНИЯ

**Уличная IP-камера с возможностью подключения SIM-карты: 1 шт.**

17. Камера должна иметь возможность работать и передавать данные через SIM-карту с поддержкой как минимум сети LTE или более новой мобильной сети.
18. CMOS-сенсор: не менее 1/2,8", разрешение: не менее 3 МП, частота видеозаписи: не менее 25 кадров/сек.
19. Поддержка технологий сжатия видео H.265/H.265+.
20. Объектив: диафрагма не хуже F1.6 при светочувствительности, горизонтальный угол обзора не менее 73°.
21. Управление PT: горизонтальное вращение не менее 345°, вертикальный наклон не менее 90°, с возможностью автоматического отслеживания цели.
22. Ночная видимость: не менее 30 м, с ИК-подсветкой и белым/гибридным освещением, в цветном и черно-белом режимах.
23. Анализ с использованием искусственного интеллекта, способный обнаруживать людей, транспортные средства, движение, вторжения и виртуальные пересечения линий, а также снижать количество ложных срабатываний.
24. Встроенный микрофон, динамик, двусторонняя аудиосвязь, звуковая и световая сигнализация.
25. Слот для карты microSD с поддержкой карт памяти объемом до 256 ГБ.
26. Не менее двух видеопотоков: основной и дополнительный, в форматах RTSP и ONVIF.
27. Веб-интерфейс управления, управление правами пользователей, синхронизация времени по протоколу NTP, возможность локального или удаленного обновления прошивки.
28. Питание: 12 В постоянного тока, максимальное потребление: не более 10 Вт.
29. Рабочая температура: не ниже -30°C до +55°C, влажность: до 95%.
30. Камера должна иметь степень защиты не ниже IP66, а также защиту от перенапряжения, ударов молнии и кратковременных колебаний напряжения.
31. Устройство должно быть новым, заводского изготовления, ранее не использованным и поставляться в полной заводской комплектации, включая адаптер питания и все необходимые для установки принадлежности.
32. Производитель предлагаемой продукции должен иметь официальный действующий веб-сайт, где опубликованы технические характеристики предлагаемой модели продукции. Поставщик обязан предоставить соответствующую ссылку на официальный веб-сайт производителя на момент поставки, по которой можно будет идентифицировать предлагаемую модель продукции, ознакомиться с ее официальными техническими характеристиками и проверить ее соответствие требованиям данной технической спецификации.
33. Гарантийный срок на поставляемую продукцию должен составлять не менее 1 года с даты поставки. В течение гарантийного срока поставщик обязан обеспечить устранение дефектов или замену продукции за свой счет.

**1 металлическая многофункциональная напольная опора.**

13. Подставка должна быть спроектирована для устойчивого напольного крепления камер, фото- и видеооборудования, проекторов и другого совместимого оборудования и должна представлять собой самонесущую металлическую конструкцию.
14. Основание должно быть утяжеленным, цельнометаллическим, плоским, прямоугольной или квадратной формы, с каждой стороной не менее 290 мм и не более 350 мм, и обеспечивать высокую устойчивость опоры во время эксплуатации.
15. Вертикальную опорную колонну следует установить на заднем крае основания, обеспечив максимально близкое расположение опоры к стене.
16. Конструкция подставки не должна иметь выступающих назад ножек, крестообразных, звездообразных или других стабилизирующих элементов, которые препятствовали бы установке вплотную к стене.
17. Опора должна иметь возможность регулировки высоты в пределах от 65 до 125 см, а также механизм для надежной фиксации положения после регулировки.
18. Верхняя часть опоры должна иметь выступающий вперед горизонтальный металлический рычаг размером не менее 190x27x4 мм для крепления оборудования.
19. Точка крепления должна обеспечивать вращение на 360° и регулировку наклона.
20. Крепежный винт должен быть стандартного размера 1/4" (UNC).
21. Допустимая грузоподъемность должна составлять не менее 10 кг.
22. Конструкция должна быть полностью металлической и иметь антикоррозионное защитное покрытие.
23. Опора должна быть черного цвета.

Изделие должно быть новым, заводского изготовления, ранее не использованным и поставляться в полном заводском комплекте, включая все необходимые для установки аксессуары.

**2 источника бесперебойного питания постоянного тока.**

12. Тип: низковольтный источник бесперебойного питания для маршрутизаторов, коммутаторов, камер и других устройств, работающих от напряжения 5 В, 9 В или 12 В.
13. Аккумулятор: литий-ионный, не менее 4 × 5000 мАч, общая энергетическая емкость: не менее 72 Вт·ч.
14. Входное напряжение: 12 В постоянного тока / не менее 2,0 А.

15. Выходные напряжения: не менее: 12 В постоянного тока / 1,5 А, 9 В постоянного тока / 2,0 А, 5 В постоянного тока / 2,1 А, USB-A: 5 В / 2,1 А и USB-C: 5 В / 2,1 А.
16. Максимальная выходная мощность: не менее 18 Вт.
17. В случае отключения внешнего источника питания переход в режим работы от батареи должен происходить автоматически со временем переключения 0 мс.
18. Устройство должно иметь защиту от перезаряда, переразряда, перегрузки и короткого замыкания.
19. Устройство должно иметь кнопку включения/выключения, режим внешнего питания и световые индикаторы, показывающие уровень заряда батареи не менее 100%, 60% и 30%.
20. Корпус должен быть изготовлен из огнеупорного пластика класса V-0, иметь вентиляционные отверстия и быть пригодным для настенного монтажа.
21. В комплект поставки должен входить адаптер питания постоянного тока 12 В с током не менее 2,0 А.
22. Предлагаемое устройство должно быть официальным продуктом производителя или торговой марки, иметь опубликованное техническое описание, четкое название модели и официальную онлайн-ссылку, которая позволит вам ознакомиться с техническими характеристиками устройства.

Гарантийный срок на поставляемую продукцию должен составлять не менее 1 года с даты поставки. В течение гарантийного срока поставщик обязан обеспечить устранение дефектов или замену продукции за свой счет.

**Обязательные условия**

**Поставщик должен надежно закрепить камеру к нижней части горизонтальной опоры, при необходимости используя соответствующий металлический адаптер. На верхней части горизонтальной опоры должна быть закреплена черная металлическая опорная платформа размером 140 × 140 мм и толщиной не менее 1 мм. Края опорной платформы должны быть гладкими и надлежащим образом обработанными, без острых краев и неровностей. Опорная платформа должна быть надежно закреплена винтами, а блок питания должен быть установлен непосредственно на опорной платформе с возможностью легкого снятия и замены.**

**Комплекс должен иметь завершенный, аккуратный и заводской вид.**